


Վերջին տարիներին ՀՀ Լոռու մարզում իրականացված առավել կարևոր աշխատանքները

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈԼՈՐՏ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐ

Մարզի համայնքների բյուջեներով նախատեսված սեփական եկամուտներից 2013թ. հավաքագրվել է 1511.5 մլն. դրամ, 2014թ. 1619.7 մլն. դրամ, 2015թ. 1661.6 մլն. դրամ, 2016թ. 1667.8 մլն. դրամ, 2017թ. 1852.8 մլն. դրամ, իսկ 2018թ. համար նախատեսվել է 2369.0 մլն. դրամ, կամ պլանավորումը 2018 թվականին 2013թ. փաստացի հավաքագրման համեմատ ավելացել է 857.5 մլն. դրամով:

ՀՀ Լոռու մարզի համայնքների 2013-2018թթ. բյուջեների սեփական եկամուտներ



2013թ. համայնքների բյուջեներով փաստացի կատարվել է 632.5 մլն. դրամի կապիտալ ծախսեր, 2014թ. 650.6 մլն. դրամ, 2015թ. 719.9 մլն. դրամ, 2016թ.ին 663.7 մլն. դրամ, 2017թ. 721.9 մլն. դրամ, իսկ 2018թ. համար պլանավորվել է 1257.1 մլն. դրամ, որը 2013թ. փաստացի ծախսվածից ավել է 624.6 մլն. դրամով:

ՀՀ Լոռու մարզի համայնքների 2013-2018թթ. բյուջեների կապիտալ ծախսեր

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Առողջապահության ոլորտ

Աշխատանքների կատարման համար ներ է դրվել **6.46 մլրդ. դրամ, որից 4.49 մլրդ. դրամ՝** ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ, **1.15մլրդ. դրամ՝** «Տաշիր» բարեգործական հիմնադրամի ֆինանսավորմամբ, **816.0մլն. դրամ՝** ԱՄՆ-ի նվիրատվությամբ:

1. «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքի կառուցում, ընդհանուր արժեքը՝ **5.64մլրդ. դրամ:**

Հիվանդանոցային մասնաշենք

Կառույցն իրականացվել է ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ, ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի պատվիրատվությամբ: Հզորությունը՝ 190 մահճակալ/տեղ:

Ծննդատան մասնաշենք

Կառույցն իրականացվել է «Տաշիր» բարեգործական հիմնադրամի ֆինանսավորմամբ:

Հզորությունը՝ 40 մահճակալ/տեղ:

2.«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի Վանաձորի մարզային լաբորատորիայի կառուցումն իրականացվել է ԱՄՆ-ի նվիրատվությամբ:

Այս ծրագրերի նպատակն է բարձրացնել մարզի բնակիչների առողջապահական սպասարկման որակը և մակարդակը:

Կրթության ոլորտ

Աշխատանքների կատարման համար ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ ներ է դրվել **2.2 մլրդ դրամ**:

1.Վանաձորի թիվ 18 դպրոցի վերակառուցման աշխատանքներն իրականացվում են ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ, ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի պատվիրատվությամբ: Ծրագրային արժեքը՝ **1.15 մլրդ դրամ**:

2. Վանաձորի թիվ 7 հիմնական դպրոցի կառուցում

3 մասնաշենքերից բաղկացած երկհարկանի համալիրը նախատեսված է 450 աշակերտի համար: Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ /ՀՏՀ/ : Ծրագրային արժեքը՝ **1.05 մլրդ դրամ**: Շինարարության ավարտ՝ մարտ 2019թ.:

Այս ծրագրերի նպատակն է բարձրացնել դպրոցների սեյսմակայունության մակարդակը և բարելավել շենքային պայմանները, ինչի արդյունքում կբարելավվի դպրոցների ուսումնական պրոցեսը:

Նախադպրոցական ուսումնական հաստատություններ

Աշխատանքների կատարման համար ներ է դրվել **2.175 մլրդ դրամ**, որից **175.0 մլն դրամ**՝ ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ, **2.0 մլրդ դրամ**՝ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի ֆինանսավորմամբ:

1. Գյուլագարակում մանկապարտեզի կառուցումն իրականացվել է ՀՏՀ-ի /Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ/ ֆինանսավորմամբ: Կառույցը միահարկ է, երկհերթ՝ 90 տեղով:

2. «Տաշիր, Ստեփանավան, Ալավերդի և Սպիտակ քաղաքներում նոր մանկապարտեզի շենքերի կառուցում»: Կառուցման աշխատանքներն իրականացվել են «Տաշիր» բարեգործական հիմնադրամի ֆինանսավորմամբ: Յուրաքանչյուր մանկապարտեզում նախատեսված է 6 խումբ՝ 150 երեխայի համար:

Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ

Աշխատանքների կատարման համար ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ ներ է դրվել **2.71 մլրդ դրամ**:

1. Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի վերակառուցման աշխատանքներն իրականացվում են ՀՀ պետական բյուջեով, ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեի պատվիրատվությամբ: Ծրագրային արժեքը՝ **1.78 մլրդ դրամ**:

2. Վանաձորի Միքայել Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջի հիմնանորոգումն իրականացվում է ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ, պատվիրատու՝ ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե: Ծրագրային արժեքը՝ **930.0 մլն դրամ**:

Այս ծրագրերի նպատակը միջին մասնագիտական կրթության դերի և որակի բարձրացումն է:

Տեղեկատվական տեխնոլոգիաներ

Ոլորտի զարգացման համար ներդրումների ծավալը **3.66 մլրդ դրամ**, որից **1.5 մլրդ դրամ**՝ Հայաստանի մանուկներ հիմնադրամի/COAF/ ֆինանսավորմամբ, **2.16 մլրդ դրամ**՝ Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի և ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ-ի համատեղ ֆինանսավորմամբ:

1.Դեբեդ համայնքում «ՍՄԱՐԹ կենտրոնի» կառուցում: ՍՄԱՐԹ կենտրոնի վրա հիմնված ՍՄԱՐԹ ավանի ծրագրի արժեքը **3,0 մլն. դոլար** է, որի անբաժանելի մասն են կազմում բուժկետը, երեխայի խնամքի ցերեկային կենտրոնը, հյուրատունը, արվեստանոցները, սպորտային հրապարակները, ջերմոցները և մի շարք այլ կառույցներ՝ 7,2 հա տարածքի վրա: Շինարարական աշխատանքներն ավարտված են:

2. «Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի հիմնանորոգում» - Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի և ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ-ի համատեղ ֆինանսավորմամբ:

Նշված կառույցները հանձնված են շահագործման:

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Ճանապարհաշինություն

Ներկայումս իրականացվում են **Մ6 (Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման)** միջպետական նշանակության ճանապարհի հիմնանորոգման աշխատանքները: Ծրագրի ընդհանուր արժեքն է **102.0մլն. եվրո**, որը ֆինանսավորվում է Եվրոպական ներդրումային և Ասիական զարգացման բանկերի կողմից համատեղ: Հիմնանորոգվող ճանապարհի ընդհանուր երկարությունը կազմում է 90.19կմ: Կառուցվել է երեք նոր կամուրջ, հիմնանորոգվել՝ ինը, երեք թունելներում իրականացվել են վերակառուցման, ինչպես նաև մայթերի, անվտանգության խորշերի կառուցման, ասֆալտապատման, ներքին հարդարման և այլ աշխատանքներ:

Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ և ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորմամբ (20%՝ 700.0 մլն դրամ) կատարվել են Լոռու մարզի **Ագարակ-Յաղաձ-Օձուն-Մ-6** ճանապարհի 39.6կմ երկարությամբ ճանապարհահատվածի վերակառուցման աշխատանքներ, ինչպես նաև ասֆալտապատվել են Ծաթեր, Մղարթ, Արևածագ, Կարմիր Աղեկ համայնքների այդ ճանապարհահատվածի հետ միացող ճանապարհները, ընդհանուր արժեքը՝ **3.5 մլրդ դրամ**: Ճանապարհահատվածն ունի կարևոր նշանակություն, քանի որ այն հանդիսանում է այլընտրանքային ճանապարհ Մ-6 միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի համար:

ՄԱԿ-ի զարգացման գրասենյակի ֆինանսավորմամբ հիմնանորոգվել է Մ-3 միջպետական նշանակության ճանապարհի 6.8կմ երկարությամբ **Տաշիր-Գոգավան** ճանապարհահատվածը, ընդհանուր արժեքը՝ **1.4 մլրդ դրամ**:

Վերջին տարիներին իրականացված աշխատանքների արդյունքում բարելավվել են գրոսաշրջային ենթակառուցվածքները, համայնքների միջև հաղորդակցության մակարդակը, նվազել է տրանսպորտային միջոցների վառելիքի ծախսը, ավելի դյուրին է դարձել գյուղատնտեսական մթերքների տեղափոխումը, կրճատվել է հաղորդակցության ժամանակը:

Ջրամատակարարում

ՀՀ Լոռու մարզի բնակչության ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում իրականացված խոշոր ծրագրերը.

KFW Գերմանական վարկային ծրագրի 11.0 մլն եվրո գումարի շրջանակներում Վանաձոր քաղաքի խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ոլորտում բարելավվել է քաղաքի բնակչությանը մատակարարվող ջրի որակը և քանակը՝ ապահովելով 24-ժամյա ջրամատակարարում:

Ասիական զարգացման բանկի, Եվրոպական ներդրումային բանկի և ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորմամբ, ընդհանուր **3.1 մլրդ դրամ** գումարով մարզի սպասարկման տարածքի 14 համայնքներում իրականացվել են ՕԿՋ-ների վերանորոգման, ջրատարերի և բաշխիչ ցանցերի վերանորոգման, ջրաչափական հորերի տեղադրման, ջրամատակարարման համակարգերի բարելավման և տնային մուտքագծերի կառուցման աշխատանքներ:

«Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի **2.25 մլրդ դրամ** ֆինանսավորմամբ մարզի 7 համայնքներում իրականացվել են ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերակառուցման աշխատանքներ:

Էներգետիկ ոլորտ

ՀՀ Լոռու մարզում **«ՀԷՏ» ՓԲԸ «Դեբեդ»** մասնաճյուղի սեփական միջոցներով՝ **1.4 մլրդ դրամ** գումարով իրականացվել են վերանորոգման և արդիականացման աշխատանքներ:

Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի 2.5մլրդ. դրամ ֆինանսավորմամբ ընթացքի մեջ են **«ԲԵՏ» ՓԲԸ «Հյուսիսային»** մասնաճյուղի «Վանաձոր-1» 110/10/6 կՎ ենթակայանի վերակառուցման աշխատանքները: «Հյուսիսային» մասնաճյուղը հանդիսանում է միջանկյալ օղակ արտադրող կայանների և բաշխիչ ցանցերի միջև ՀՀ հյուսիսային տարածքում՝ ինչպես նաև հանդիսանում է կարևոր օղակ, որի միջոցով կատարվում է էլեկտրաէներգիայի փոխանցումը Վրաստանի Հանրապետություն:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Լոռու գազաֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղի սեփական միջոցներով՝ **1.14 մլրդ** դրամ գումարով իրականացվել են վերանորոգման և արդիականացման աշխատանքներ:

Վերջին տարիներին ՀՀ Լոռու մարզի աղետի գոտու բնակավայրերում բնակապահովման խնդիրների վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության կառավարության տարբեր որոշումներով Լոռու մարզին հատկացվել է 351.5մլն. դրամ, լուծվել է 84 ընտանիքի բնակարանային պայմանները, Սպիակ քաղաքին՝ 252.5մլն. դրամ /55 ընտանիք/, Վանաձորին՝ 45մլն. դրամ /11ընտանիք/, գյուղական բնակավայրերին՝ 54մլն. դրամ/18 ընտանիք:

Գյուղատնտեսություն և բնապահպանություն

2013-2017թթ. ընթացքում պետական աջակցության ծրագրերի շրջանակներում մարզի համայնքներին հատկացվել է 12644 տոննա պարարտանյութ, 4.519մլն. լիտր դիզելային վառելանյութ, 600 տոննա գարնանացան գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնզանի սերմացուներ, 1895 տոննա աշնանացան ցորենի էլիտային և առաջին վերարտադրության սերմացու և 5100կգ մկնասպան թունանյութ: Պետական աջակցության ծրագրերի իրագործման շնորհիվ 2017թ. դրությամբ վարելահողերի

նպատակային օգտագործումը ավելացել է 6106հա-ով, որը կազմում է 33323 հա: Գյուղատնտեսական համախառն արտադրանքի տեսակարար կշիռը (2013թ.) 7.2 %, որը կազմել է 67.3մլրդ. դրամ, (2017թ.) 7.4%, որը կազմել է 73.7մլրդ. դրամ:

Օգտագործվող վարելահողերի համեմատականը

Վարելահողերը	2013թ.		2017թ.	
	հա	%	հա	%
Ընդամենը՝ 42 038 հա	27217	64,7	33323	79

Լոռու մարզի 26 համայնքներում տեղադրվել է «Ձենիթ» տիպի թվով 40 հակակարկտային կայաններ:

2013-2017թթ. ընթացքում ոռոգման համակարգերի հիմնանորոգման, վերակառուցման և բարելավման նպատակով տարբեր ծրագրերի շրջանակներում ներ է դրվել շուրջ 550.0 մլն դրամ:

2013-2017 թթ. Լոռու մարզում հիմնադրված կազմակերպությունները

Կազմակերպության անվանումը	Հիմնադրման թվականը	Համայնքը	Հզորությունը	Աշխատատեղեր
«Սպիտակի թռչնաբուծական ֆաբրիկա»	2014թ.	Սպիտակ	1 570 000 գլուխ բրոյլեր՝ 2250տ մսի արտադրությամբ	150
«Արջուտ ֆուդ» ՍՊԸ ազնվամորու մշակում	2015թ.	Լեռնապատ	8.5 հա հողատարածք՝ կաթիլային ոռոգմամբ	30
«Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ հացամթերքների արտադրություն	2015	Վանաձոր	Ցորենի, ցորենի թեփի, մակարոնեղենի և հացի արտադրություն	120
«Վան ֆուդ» ՍՊԸ պտուղ, բանջարեղենի վերամշակման արտադրություն	2017	Բազում	Արտադրում է 25 տեսականի պահածոներ	15
«Բոզոյան» ՍՊԸ սպանդանոց	2017	Տաշիր	1 օրվա կտրվածքով՝ 25 գլուխ խոշ. եղջերավոր կենդանի, 50 գլուխ մանր եղջ. կենդանի	10-15

2013-2017թթ. մարզում իրականացված ներդրումային ծրագրերը

- «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում մարզի 20 համայնքներում ձևավորվել են գյուղատնտեսական սպառողական կոոպերատիվներ, որոնց տրամադրվել է 20 միավոր գյուղտեխնիկա՝ տրակտոր և 57 միավոր գյուղգործիքներ: Կատարվել է արոտների ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքներ՝ 9.6կմ ջրագիծ, 45 հատ խմոց: Ծրագրի շրջանակներում իրականացվել է շուրջ 508.8մլն. դրամի ներդրում, որից 304.2մլն. դրամ արոտների ջրարբիացման, իսկ 204.6 մլն. դրամ գյուղտեխնիկայի ձեռք բերման ուղղությամբ:

- Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման պետական աջակցության ծրագրի շրջանակներում մարզի 7 շահառուների կողմից ձեռք է բերվել 11 միավոր գյուղատնտեսական տեխնիկա և գյուղ. գործիք: Լիզինգի գումարը կազմել է 44.97մլն. դրամ, որից պետության կողմից սուբսիդավորվել է 11.5մլն. դրամ:

- «ՀՀ-ում 2007-2016թթ. տավարաբուծության զարգացման ծրագրի» շրջանակներում տարածամկետ վճարման պայմանով, սկսած 2013 թվականից մարզ է ներկրվել 567 գլուխ շվից, հոլշտին և սիմենթալ ցեղերի տոհմային երինջներ

- Մեծ Պարնի համայնքում Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի կողմից իրականացված ծրագրի շրջանակներում, պետական բյուջեի միջոցների հաշվին 48.0մլն. դրամ գումարով հիմնվել է «Անասնաբուժական սպասարկման կենտրոն»:

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

ՀՀ Լոռու մարզի անտառային պետական ֆոնդը կազմում է 101,205 հա, որից անտառածածկ է 85,800 հա-ը: Անտառային ֆոնդը կազմում է մարզի տարածքի մոտ 27%-ը: Մարզի անտառների պլանային հատումները 2013-2017թթ. կազմել են 59120 մ³, այդ թվում Թեղուտի հանքավայրից 16200 մ³: Մթերվել է թափուկ վառելափայտ 48350 մ³:

Ընդհանուր առմամբ 2013-17թթ. ընթացքում մարզում իրականացվել է շուրջ 395 հա անտառտնկման, ինչպես նաև նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների խնամքի և լրացման աշխատանքներ: Իրականացվել են նաև ցանկապատման աշխատանքներ:

Թեղուտի ծրագրով Շնող համայնքում նախատեսվում է 180հա պտղատու այգիների հիմնում, որից արդեն իսկ հիմնվել է 30 հա:

Մարզպետարանի հանձնարարությամբ համայնքներում ծառերի էտը կազմակերպվում է ուշ աշնանը, որից առաջացած վառելափայտը տրամադրում են սոցիալապես անապահով ընտանիքներին:

Ընդերքօգտագործում և շրջակա միջավայր

Լոռու մարզը հարուստ է տարբեր տեսակի օգտակար հանածոներով և իր նշանակությամբ երկրորդն է հանրապետությունում: Մարզի տարածքում հանքարդյունահանման աշխատանքներ են իրականացնում շուրջ 34 կազմակերպություններ, որոնցից 3-ը իրականացնում են մետաղական հանքավայրերի շահագործում:

ՀՀ պետական բյուջեի կողմից 2013-2017թթ. բնապահպանական և առողջապահական ծրագրեր իրականացնելու համար Լոռու մարզի վնասակար ազդեցության ենթարկվող համայնքներին տրամադրվել է շուրջ 812մլն. դրամ: 2018թ. կտրամադրվի 182.6մլն.դրամ:

KfW գերմանական զարգացման բանկի օժանդակությամբ Լոռու մարզում նախատեսվում է կառուցել նոր սանիտարական աղբավայր: Սանիտարական աղբավայրը պետք է ծառայի ոչ միայն Գուգարքի և Սպիտակի տարածաշրջաններին, այլև Տավուշի մարզի Դիլիջան քաղաքին: Ըստ նախնական գնահատականի այն ծառայելու է 25 տարի, ավելի քան 1 մլն. տոննա թափոն ընդունելու հեռանկարով:

Լոռու մարզից անձնագրավորվել են 9 բնության հուշարձան՝ 166հա ընդհանուր տարածքով:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Նախադպրոցական կրթություն

Նախադպրոցական ուս հաստատությունների թիվը	ՀՈԱԿ	Նախակրթարաններ ի թիվը	Այլընտրանքային ուսումնական հաստատությունների թիվը
108	69	34	5
		2018թ. նախատեսվում է ևս 6 հաստատություն	2018թ. նախատեսվում է ևս 3 հաստատություն

Նախակրթարանների թիվը .

2014-2015 ուստարի	2015-2016 ուստարի	2016-2017 ուստարի	2017-2018 ուստարի
22	25	31	34

Միջնակարգ կրթություն

2018 թվականից Լոռու մարզի դպրոցներում աշխատում են <<Դասավանդի՛ր, Հայաստան >> հիմնադրամի կողմից գործուղված թվով 34 ուսուցիչներ:


2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.
գործուղված ուսուցիչների թիվը	գործուղված ուսուցիչների թիվը	գործուղված ուսուցիչների թիվը	գործուղված ուսուցիչների թիվը
6	12	19	34

Դպրոցահասակ երեխաների ստեղծարար միտքը ձևավորելու և զարգացնելու նպատակով Լոռու մարզում հիմնադրվել և գործում են թվով 20 «Արմաթ» լաբորատորիաներ, որոնցից 16-ը դպրոցներում, 4-ը այլ հաստատություններում:

7 Առարկայական օլիմպիադաներ

հանրապետական փուլի մրցանակակիրներ.

2014-2015 ուստարի	2015-2016 ուստարի	2016-2017 ուստարի
29	34	41



«Դպրոցական սնունդ» ծրագրի շրջանակներում մարզի 143 ուսումնական հաստատություններում տարրական դասարանների 11 900 երեխաներ ստանում են տաք

սնունդ: 352 օգնականներ, որոնք հիմնականում տվյալ դպրոցի երեխաների ծնողներն են, ընդգրկված են այդ գործընթացում:

Ներառական կրթություն իրականացնելու մասով կատարված աշխատանքներ.

2017 թվականի սեպտեմբերից Լոռու մարզում իրականացվում է համընդհանուր ներառական կրթություն: Լոռու մարզի հատուկ դպրոցների վերակազմակերպման արդյունքում մարզի հանրակրթական դպրոցներ են տեղափոխվել 98 աշակերտ, որի արդյունքում 2017-18 ուստարում ներառական կրթություն են իրականացնում մարզի 74 դպրոցներ՝ 782 վկայագրված աշակերտների համար:

2017 թվականին ստեղծվել են «Ստեփանավանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը և «Վանաձորի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը Ալավերդու մասնաճյուղով և «Սպիտակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը:

«Սմարթ» դասարաններ

2017 թվականին Լոռու մարզը հայտարարվել է «Սմարթ» մարզ: 17 հանրակրթական պետական ուսումնական հաստատություններում ստեղծվել են «Սմարթ» դասարաններ՝ հագեցած ամենաժամանակակից տեխնիկական միջոցներով, բարձր հզորության համակարգիչներով: Դասասենյակների վերանորոգումը, կահավորումը, համակարգչային տեխնիկայի ձեռքբերումը իրականացվել է դպրոցների խնայողությունների հաշվին: Թվով 17 դասասենյակների ստեղծման ներդրումների ծավալը կազմել է շուրջ 115.0 մլն. դրամ: 2018 թվականին շարունակվում և ավարտին է մոտենում ևս 7 հանրակրթական ուսումնական հաստատություններում «Սմարթ» դասարանների կահավորման և տեխնիկական հագեցման գործընթացը:

Համագործակցում ենք Դիլիջանի միջազգային դպրոցի, «Այբ դպրոցի», Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի հետ, որոնք «Սմարթ» դասարաններ ունեցող դպրոցների տնօրենների, փոխտնօրենների և ուսուցիչների հետ իրականացնում են վերապատրաստման ծրագրեր:

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏ

«Պետական աջակցություն մշակութային միջոցառումներին» ծրագրի շրջանակներում պարբերաբար կազմակերպվել են հետևյալ միջոցառում-հանդիսությունները.

ա/ «Լոռի – Արցախ՝ Մարտակերտ» մշակութային օրերի կազմակերպում:

բ/ «Պատանի երաժիշտ կատարողների» Լոռու մարզային մրցույթ-փառատոն

գ/ «Ազգային նվագարանների երգի-պարի, ասմունքի» ամենամյա Լոռու մարզային փառատոնի կազմակերպում

դ/ «Լոռվա հարսանիք» հանդիսությունների կազմակերպումը համայնքներում:

ե/ «Վարդավառ» Ծիսակատարություն-հանդիսություն Գյուլագարակ համայնքի «Հեքիաթ» հանգստյան գոտու տարածքում՝

«Երգում ենք Կոմիտաս», «Մշակութային Վերածնունդ», «Երգող Հայաստան», «Իմ Հայաստան», «Թատերական Լոռի», «Երգը բարեկամության կամուրջ է» համահայկական փառատոնների կազմակերպում և անցկացում:

«Ասմունքի Հանրապետական Մանկապատանեկան» մրցույթ-փառատոնի Լոռու մարզային և հանրապետական փուլերի կազմակերպում:

Սպորտի ոլորտ.

Մարզաձևերի զարգացման և առողջ ապրելակերպի խթանման համար կարևոր էր մարզում գործող ընդհանուր թվով 8 մարզադպրոցների վերակառուցումը և վերանորոգումը: Ֆուտբոլ մարզաձևի զարգացմանը նոր խթան հանդիսացավ 2016 թվականին Վանաձորում բացված ֆուտբոլի ակադեմիան:

2017 թվականին Ալավերդի քաղաքում վերակառուցվել է ըմբշամարտի դպրոցը:

Առողջապահություն

Վերջին տարիներին բնագավառում կատարվել են **շուրջ 8.3 մլրդ. դրամի** խոշորածավալ աշխատանքները.

- **Պետական բյուջերի միջոցներով** ավարտվել են «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքի կառուցման աշխատանքները, որի ընդհանուր արժեքը կազմել է 4.885 մլրդ. դրամ, ծննդատան մասնաշենքի արժեքը կազմել է է 1.15 մլրդ. դրամ, որը տրամադրվել է «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից, մնացած մասնաշենքի արժեքը՝ 3.705 մլրդ. դրամ: «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքի և մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքի բժշկական կահույքով և սարքավորումներով վերագինման և հագեցման նպատակով ներդրվել է 1.722 մլրդ. դրամ:

- **Պետական բյուջերի միջոցներով** ընթացքի մեջ է՝ «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի պոլիկլինիկական մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքները՝ 2017թ. կատարվել են 85 մլն. դրամ արժեքով աշխատանքներ:

- Կառուցվել է «Ուռուտի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի շենքը: **ՀՀ առողջապահության նախարարության ԾԻԳ-ի** կողմից ներդրվել է շուրջ 62 մլն. դրամ/:

- **Պետական բյուջերի միջոցներով** «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքի հիմնանորոգման, վերագինման և կահավորման համար ներդրվել է **1.1 մլրդ. դրամ** /ներդրումներ են կատարվել Համաշխարհային բանկի, **ՀՀ առողջապահության նախարարության ԾԻԳ-ի**, Դիակոնիա ԲԿ-ի կողմից և սեփական միջոցներով/:

- «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հիվանդանոցային մասի վերանորոգման համար **Լոռու մարզի հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների ծրագրի 4-րդ փուլով** ներ է դրվել 55.0 մլն. դրամ, սեփական միջոցներով և «Հայկական ակնաբուժական նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք է բերել բժշկական սարքավորումներ, կատարել է այլ վերանորոգման և կահավորման աշխատանքներ 59.5 մլն.. դրամ ընդհանուր արժեքով, որից «Հայկական ակնաբուժական նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում մարզային ակնաբուժական կենտրոնի ստեղծումը մոտ 42.0 մլն. դրամ արժեքով: **Ընդամենը՝ 114.5 մլն. դրամ:**

- «Բաց հասարակություն» ՀԿ-ի հետ համատեղ հոգեկան հիվանդների խնամք իրականացնելու նպատակով Սպիտակ քաղաքում ստեղծվել է հոգեկան առողջության կենտրոն՝ գույքով և սարքավորումներով՝ մոտ **25.0 մլն. դրամ արժեքով:**

- «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն սեփական միջոցների հաշվին ձեռք է բերել շտապօգնության մեքենա և բժշկական սարքավորումներ, կատարվել են վերանորոգման աշխատանքներ՝ **ընդամենը՝ 12.0 մլն** դրամ:

- «Գուգարքի ԱԱՊԿ» ՓԲԸ-ի շենքի կառուցումը /**Լոռու մարզի հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների ծրագրի 4-րդ փուլ**, ներ է դրվել **շուրջ 30.0 մլն. դրամ/:**

- «Ախթալայի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի շենքի կառուցումը, /**ՀՀ առողջապահության նախարարության ԾԻԳ-ի** կողմից կենտրոնին տրամադրվել է բժշկական սարքավորումներ և կոշտ գույք, ներ է դրվել **շուրջ 60.0 մլն. դրամ/:**

- Հիմնանորոգվել են «Մեծ Պարնիի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի կազմում գործող Ծաղկաբերի ԲՄԿ-ն և Գեղասարի ԲՄԿ-ն հիմնանորոգման աշխատանքները՝ /**Լոռու մարզի հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների ծրագրի 3-րդ փուլ**, ներ է դրվել 3.0 մլն. դրամ յուրաքանչյուրի համար/՝ ընդամենը 6.0 մլն. դրամ, սեփական միջոցներով ձեռք է բերվել բժշկական սարքավորումներ և կատարվել են մասնակի վերանորոգման աշխատանքներ մոտ 3.0 մլն. դրամ արժեքով՝ **ընդամենը՝ 9.0 մլն.** դրամ:

- «Մեծավանի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի ամբուլատոր մասի վերանորոգումը /**Լոռու մարզի հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների ծրագրի 3-րդ փուլ**, ներ է դրվել 10.0 մլն. դրամ/:

ՊՓԲԸ-ում ջեռուցման համակարգի անցկացումը /Լոռու մարզի հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների ծրագրի 4-րդ փուլ, ներ է դրվել 2.5 մլն դրամ/ **Ընդամենը 12.5 մլն դրամ:**

- «Գուգարք» կենտրոնական պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ում ֆյուրոգրաֆիայի կաբինետի համար սանիտարական նորմերին համապատասխան առանձնացված տարածքի հիմնանորոգումը /Լոռու մարզի հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների ծրագրի 4-րդ փուլ, ներ է դրվել 1.8մլն. դրամ, սեփական միջոցներով կատարվել են ընթացիկ վերանորոգման աշխատանքներ ընդամենը 2,5մլն. դրամ, **ՀՀ առողջապահության նախարարության Գլոբալ հիմնադրամի** կողմից կատարվել են վերանորոգման աշխատանքներ՝ 7.3մլն. դրամի ներդրում, իր միջոցներով ձեռք է բերել բժշկական սարքավորումներ և գույք, **ՀՀ առողջապահության նախարարության ԾԻԳ-ի** կողմից տրամադրվել են բժշկական պարագաներ և գրասենյակային գույք: **Ընդամենը 25.2մլն. դրամ:**

- «Վանաձորի թիվ 5 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի տանիքի վերանորոգման աշխատանքները /Լոռու մարզի հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների ծրագրի 3-րդ փուլ, ներ է դրվել 7.0մլն. դրամ, իր միջոցներով ձեռք է բերել բժշկական սարքավորումներ, կատարել վերանորոգման աշխատանքներ: **Ընդամենը՝ 9.1մլն. դրամ:**

- «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ-ի հակատուբերկուլյոզային բաժանմունքում **Լոռու մարզի հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների ծրագրի 4-րդ փուլով** անց է կացվել ջեռուցման համակարգ: Այս նպատակով կատարվել է **20.0 մլն.դրամի ներդրում:**

- Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ **ՀՀ առողջապահության նախարարության ԾԻԳ-ի** կողմից «Լեռնապատի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի շենքի կառուցում՝ 50.0մլն. դրամ արժողությամբ:

- «Փարոս» հիմնադրամի կողմից «Կուրթանի ԱԱՊԿ» ՓԲԸ-ում կատարվել է հիմնանորոգում՝ մոտ 6.5մլն. դրամ արժողությամբ: Համայնքը կատարել է ներդրում 10%-ի չափով:

- «Դիակոնիա» բարեգործական կազմակերպության կողմից մարզի առողջապահական ընկերությունների վերանորոգման և վերազինման նպատակով կատարել է **23.6մլն. դրամի ներդրում:**

Մեծաթիվ առողջապահական ընկերություններում, **առավելաբար պետական բյուջեի միջոցներով**, կատարվել են վերանորոգման աշխատանքներ, միաժամանակ ձեռք են բերվել բժշկական սարքավորումներ և գույք:

	Վճարովի ծառայության մուտքերը կազմել են՝ հազ.դրամ
2014թ.	475415.9
2015թ.	523786.7
2016թ.	526069.1
2017թ.	608255.7

Առ 01.05.2017թ. 190մլն. դրամ

Առ 01.05.2018թ. 228մլն. դրամ

Սոցիալական ապահովության բնագավառ

Բնագավառում կատարվել են հետևյալ խոշորածավալ աշխատանքները.

- 2016-2018թթ. **ՀՀ պետական բյուջեի միջոցներով** Վանաձորում վերակառուցվել է ինտեգրված սոցիալական կենտրոնը, ներկայումս ընթանում են կահավորման և տեխնիկական վերազինման աշխատանքները:

2017թ. **ՀՀ պետական բյուջեի միջոցներով** Տաշիրում սկսվել և շարունակվում է ինտեգրված սոցիալական կենտրոնի վերակառուցման աշխատանքները:

- **Պետությունը հետևողականորեն փոխհատուցել է քաղաքացիների կողմից ներդրված ավանդները.**
 - 2007-2017թթ. ընթացքում փոխհատուցվել են 15.969 քաղաքացիներ՝ ավելի քան 2.8մլրդ. դրամ:
- 2017թ. **ՀՀ պաշտպանության նախարարության բնակապահովման ծրագրի** միջոցով իրենց բնակարանային պայմանները բարելավեցին 15 զոհված զինծառայողի և առաջին խմբի 3 զինհաշմանդամների ընտանիքներ:
 - Նախորդած տարիներին Լոռու մարզում բնակարան կամ բնակարան ձեռք բերելու համար ֆինանսական աջակցություն են ստացել զոհվածի և զինհաշմանդամի 242 ընտանիքներ:
- 2011թ. **ՀՀ պետական բյուջեի միջոցներով** «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրի շրջանակներում ավելի քան 13.8մլն. դրամով իրականացվել է 9 ծրագիր: Համայնքները ևս կատարել են ներդրումներ: Պետության կողմից դադարեցվել է ծրագիրը մինչև 2016թ.՝ 6.0մլն. դրամով իրականացվել է 4 ծրագիր:
- 2015թ.-ից ներդրվել և **ՀՀ պետական բյուջեի միջոցներով** իրականացվել է «Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման» ծրագիրը, որի շրջանակներում 2015թ. Լոռու մարզի թվով 280 ընտանիքներին տրամադրվել է 42.2մլն. դրամ, իսկ 2016թ.՝ 492 ընտանիքներին 80.2մլն. դրամ ֆինանսական աջակցություն:
- “Save the Children” միջազգային կազմակերպության աջակցությամբ մարզում ստեղծվել և առաջօր հաջողությամբ գործում են երկու սոցիալական ձեռնարկություններ /հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությամբ/ Վանաձորի «Նեցուկ» բարեկարգման և «Բիոլայֆ» Սպիտակի ջերմոցային տնտեսություն» ՀՈԱԿ-ները:
- Մարզպետի աջակցությամբ 2015թ. «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ն Սպիտակի քաղաքապետարանի, Ալավերդու մշակույթի տան և Վանաձորի Շ.Ազնավուրի անվան մշակույթի պալատի առջև կառուցվել են թեքահարթակներ:
- Գուգարաց Թեմի համագործակցային «Ձեռք մեկնիր եղբորդ» հանրային ծրագրի շրջանակներում բնակարանամուտ են տոնել լոռեցի 20 ընտանիքներ:

ՏԻ և ՀԳՄ

- 2016 թվականի փետրվարի 14-ին Թումանյան, Մարց, Քարինջ, Լորուտ, Շամուտ, Աթան, Ահնիձոր համայնքները միավորման արդյունքում ձևավորվել է խոշորացված Թումանյան համայնքը:
- 2017 թվականի նոյեմբերի 5-ին կայացած ընտրությունների արդյունքում Թումանյանի, Ստեփանավանի և Տաշիրի տարածաշրջանների թվով **61** համայնքների միավորման արդյունքում ստեղծվել են 10-ը խոշորացված բազմաբնակավայր համայնքներ՝ Ալավերդի, Ախթալա, Օձուն, Շնող, Ստեփանավան, Գյուլագարակ, Լոռի Բերդ, Տաշիր, Մեծավան, Սարչապետ: Վարչությունը մշտական մեթոդական, խորհրդատվական, գործնական օգնություն է ցուցաբերել խոշորացված համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին:

- Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ-ի հետ ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային աջակցությամբ իրականացվող «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (**ՀաՄաՏեղ**) ծրագրի շրջանակներում 2016-2017 թվականներին իրականացրել է ՀՀ բոլոր տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով եւ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով սահմանված թափանցիկության, հանրային հաշվետվողականության եւ մասնակցության ապահովման պարտավորությունների դիտարկման (մոնիտորինգ): Մոնիտորինգի հարցումներով **երկրորդ տարին** անընդմեջ գրեթե բոլոր ցուցանիշներով լավագույնն է ճանաչվել Լոռու մարզը:
- Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից իրականացվող «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակում Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության աջակցությամբ և Հայաստանում Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՇԶՀԳ) և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) համաֆինանսավորմամբ և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության (ՏԿԶՆ) հետ համատեղ քաղաքացիների սպասարկման գրասենյակներ են հիմնվել Թումանյան, Ալավերդի և Վանաձոր համայնքներում: Քաղաքացիների սպասարկման գրասենյակների հիմնումը թույլ է տվել «մեկ պատուհան, մեկ կանգառ» սկզբունքի համաձայն քաղաքացիներին մատուցել բարձրորակ ծառայություններ, բարձրացնել համայնքապետարանների աշխատանքների արդյունավետությունն ու թափանցիկությունը, դյուրացնել համայնքապետարաններում իրականացվող վարչական գործընթացները:

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանություն

Կառավարության 2017-2021թթ և 2018-2025թթ ռազմավարության ծրագրերով նախատեսված է եղել մարզում գիշերային խնամք իրականացնող հաստատություններում խնամվող երեխաների խնամքը կազմակերպել ընտանիքներում: Այդ ուղղությամբ կատարվել են մշտական և հետևողական աշխատանքներ: Կատարվել են սոցիալական դեպքի վարումներ, գնահատվել են բոլոր այն երեխաների և ընտանիքների կարիքները, որոնց խնամքը կազմակերպվում է Վանաձորի մանկատանը և Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատությունում: Կատարվել է 260-ից ավել դեպքի վարում: Երեխաների խնամքը կամ կկազմակերպվի կենսաբանական ընտանիքներում կամ խնամատար ընտանիքներում, կամ փոքր մանկան տներում: Ներկա պահին մարզում հաշվառված են 22 խնամատար ընտանիք:

«Հայկական Կարիտաս» հասարակական կազմակերպության հետ համատեղ Վանաձոր համայնքում հիմնվել է Փոքր մանկան տունը, որտեղ իրականացվելու է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների շուրջօրյա խնամք: Նախատեսվում է ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հետ տարածաշրջաններում ևս ստեղծել նմանատիպ կառույցներ:

	2013թ.	01.05.2018թ.
Խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն	112	40
Վանաձորի մանկատուն	94	62

2017թ-ին վերակազմակերպվել են մարզում գործող հատուկ դպրոցները: Սոցիալական դեպք վարողների հետ համատեղ կատարվել են ուսումնասիրություններ, կարիքի գնահատում և երեխաները վերադարձել են ընտանիք, հաճախում են հանրակրթական դպրոցներ: Տարբեր միջազգային կառույցների հետ համագործակցությամբ ընտանիքներին տրամադրվում է տարբեր տեսակի օգնություններ:

Վանաձորի թիվ 1 հատուկ դպրոց	Սպիտակի թիվ 1 հատուկ դպրոց	Ստեփանավանի բժշկահոգեբանամանկավարժական կենտրոն
50	37	13

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

2017 թվականի ընթացքում մարզպետարանի գործունեության համար կարևոր նշանակություն են ունեցել ՀՀ կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի պահանջների, Աղքատության Հաղթահարման Ռազմավարական Ծրագրի գերակայությունների, ՀՀ կառավարության 2016թ. հուլիսի 29-ի թիվ 29 արձանագրային որոշմամբ հաստատված «ՀՀ 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարության» հիմնարար դրույթների ու զարգացման գերակա ուղղությունների համադրումը:

2017 թ. հուլիսի 6-ին ՀՀ կառավարության նիստի N 29 արձանագրային որոշմամբ հաստատվեց «ՀՀ Լոռու մարզի 2017-2025թթ. տարածաշրջանային զարգացման ռազմավարություն»-ը: Ըստ այդ երկրաժամկետ ծրագրի, սահմանվեց *Լոռու մարզի տեսլականը՝ ունենալ բազմաճյուղ, զարգացած արդյունաբերություն, արդիականացված գյուղատնտեսություն և զարգացած զբոսաշրջություն, ՏՏ ոլորտ: Զարգացման երեք առաջնահերթ գերակայություններն են՝*

- 1) *Արտահանմանը միաված արդյունաբերության զարգացում, մասնավորապես՝ հանքային արդյունաբերության, թեթև արդյունաբերության, սննդի արդյունաբերության և ՏՏ ոլորտի,*
- 2) *Ինտենսիվ գյուղատնտեսության զարգացում,*
- 3) *Մշակութային, գյուղական տուրիզմի զարգացում, ներառյալ ձմեռային տուրիզմի և էկոտուրիզմի զարգացում:*

Համայնքների զարգացման ոլորտ

2017թ.-ից մեկնարկվեցին համայնքների զարգացման ծրագրերի տարեկան աշխատանքային պլանների մշակման գործընթացը:

Սուրվենցիոն ծրագրեր – 2018թ.-ին ՀՀ կառավարության նախաձեռնությամբ մեկնարկվեց համայնքներին պետության կողմից այլ սուրվենցիաներ տրամադրելու համար՝ կապիտալ բնույթի ծրագրերի իրագործման գործընթացը: Այդ կոնտեքստում Լոռու մարզի 13 համայնքների կողմից մշակվել են 23 ծրագրեր (1406,9մլն.դրամ ընդհանուր բյուջեով), որից ՀՀ կառավարության հավանությանն են արժանացել դեռևս 9-ը, արժեքը 231.6մլն.դրամ:

Ներդրումային ծրագրեր - Մշակվել և ՀՀ ՏԿԶՆ է ներկայացվել շուրջ 30 ներդրումային ծրագրեր, որից՝ 15-ը գյուղատնտեսական (12 սկսնակ եւ 18 գործող բիզնեսի), 14 ծրագիր 1.487մլրդ դրամ արժողությամբ (նոր ստեղծող աշխատատեղերի թիվը 166), պլանավորվել էր իրականացնել 2018թ.-ին:

2017թ.-ին Ֆինանսավորվեցին երկու ծրագրեր՝

1. «Ռոգֆուդ» ՍՊԸ-ի արտադրանքի ծավալների մեծացման և շուրջ տարին արտադրական գործունեության իրականացման նոր սարքավորումների ձեռք բերել համար: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում էր 45.000 ԱՄՆ դոլար, ստեղծելով 5 նոր աշխատատեղ:

2. «Ֆերմերային տնտեսության» հիմնում Լոռու մարզի Ամրակից համայնքում, Գործող տնտեսության ընդլայնման, մսի պահածոյացման արտադրամաս ստեղծելու և 200 գլուխ հորթեր ձեռք բերելու համար ընկերությանը տրամադրվել է 35.0մլն ՀՀ դրամի վարկային միջոց:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ

2011թ.-ից մեկնարկվեց և 2016թ.-ին հանձնվեց շահագործման Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնը (ՎՏԿ) ստեղծելով հնարավորությունների և ծառայությունների այնպիսի զարգացող միջավայր, որը կնպաստի աշխատատեղերի ստեղծմանը, կաջակցի տաղանդավոր երիտասարդներին և ընկերություններին կյանքի կոչել նորարար բիզնես գաղափարներ՝ նպաստելով տարածաշրջանի կայուն զարգացմանը:

Ներկայումս՝

- ✓ **ՎՏԿ-ում տեղակայված ընկերությունները թիվը - 9**
- ✓ **Ստեղծված նոր աշխատատեղերի թիվը - 63**
- ✓ **Կազմակերպվել են բազմաթիվ եւ բազմաբնույթ միջոցառումներ, այդ թվում՝ 2017թ.-ին Հայաստանում առաջին ճարտարագիտական համաժողով-ցուցահանդեսը, 2018թ.-ին Հայաստանում զբոսաշրջության զարգացման հեռանկարների մրցույթը հէքըթոնի ձեռաչափով**
- ✓ **Իրականացվել են կարճաժամկետ բազմաթիվ դասընթացներ եւ վերապատրաստումներ**
- ✓ **Yandex ծրագրավորման դպրոցի հիմնում**
- ✓ **ՎՏԿ ամառային դպրոցը 2 փուլով**

Մարզպետարանի եւ Հայաստանի Ինկուբատոր Հիմնադրամի հետ համատեղ նախաձեռնվել է պիլոտային ծրագիր, որի շրջանակներում նախատեսվում է համակարգչային գիտություն առարկայի ներդրումը Լոռու մարզում:

2017թ.-ին Լոռու մարզը հայտարարվեց **«Ամարթ մարզ»**, որով և նախատեսվում էր հանրապետությունում դառնալ օրինակելի: Գաղափարը հղացավ 2016թ.-ին ֆրանսիայի Պրովանս Ալպեր Լազուրի Ափ ռեգիոն մարզպետ Ա.Նալբանդյանի կատարած այցի ժամանակ, երբ քննարկվել էին երկու մարզերի հետագա համագործակցության ոլորտները:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

2017թ մարզի արդյունաբերական ձեռնարկությունների կողմից թողարկված արտադրանքի ծավալը ընթացիք գներով կազմել է 146408.6 մլն դրամ, 2013թ-ի 74580.5մլն դրամի դիմաց կամ անցած 4 տարում արտադրության ծավալի աճը կազմել է 196.3%: Հանքագործական արդյունաբերության ծավալը 2017թ-ին կազմել է 77009.6 մլն դրամ 2013թ-ի 8760.7մլն դրամի դիմաց, մշակող արդյունաբերության ծավալը համապատասխանաբար 58113.4մլն դրամ և 55273.3 մլն դրամ, ջրամատակարարում և այլ ճյուղերը համապատասխանաբար 1206.8 մլն դրամ և 944.1 մլն դրամ: Մարզի արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը հանրապետականի ծավալում 2013թ-ն 6.1%- ից 2017թին հասել է 8.8%-ի: Անցած տարիներին մարզի

արդյունաբերությունը որպես գերակա խնդիր ապահովել է հանքարդյունաբերության, թեթև արդյունաբերության և SS ոլորտի առաջանցիկ զարգացումը: Ըստ ճյուղերի աճը կազմել է՝ հանքագործական արդյունաբերություն- 8.8 անգամ, մշակող արդյունաբերություն-105.1%, այդ թվում թեթև արդյունաբերությունը 5.5 անգամ, ջրամատակարարումը և այլ ճյուղեր 127.8%:

Աշխատողների թիվը 4 տարում աճել է 121.0%-ով և 2017թ-ին կազմել 7275 մարդ: 2014թ-ի տարեվերջին շահագործման է հանձնվել <<Թեղուտ>> ՓԲԸ-ն որտեղ սկսել են աշխատել 1200-ից ավել մարդ և 2017թ-ին թողակրկել է 70191.4 մլն դրամի արտադրանք, 2017թ-ին յուրացնելով նաև մոլիբդենի խտանյութի արտադրությունը (1123 տ): 2017թ -ին սկսել է գործել նաև Վանաձորի <<Ավտոգեն Վան>> ՍՊԸ-ն (241.0 մլն դրամի արտադրանք և 107 աշխատող) ինչպես նաև <<Դարբբագս>> կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն (2329.0 մլն դրամի արտադրանք և 790 աշխատող):

Արտահանման ծավալները արդյունաբերությունում 2017թ-ին կազմել է 94229.2 մլն դրամ (արտահանման 64.4%), 2013թ-ն 46906.4 մլն դրամի դիմաց (62.3 %):

Արտաքին ապրանքաշրջանառությունը մարզում 2017թ-ն կազմել է 285.9 մլն դոլար, 2013թ-ի 240.6 մլն դոլարի դիմաց կամ աճը կազմել է 118.8%:

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Արտաքին կապերի եւ միջազգային համագործակցության շրջանակներում վերջին տարիներին մարզում իրականացվել են խոշորածավալ աշխատանքներ, որոնք զգալի ներդրում են ունեցել մարզի զարգացման գործընթացում:

Նոր հիմքերի վրա դրվեցին փարբեր երկրների փարածաշրջանների հետ համագործակցությունը, այդ թվում՝

- Ֆրանսիայի Պրովանս Ալպեր Լազուրի Ափ եւ Ռիոն Ալպ ռեգիոնների,
- Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Շանսի նահանգի
- Վրաստանի Աջարիայի Ինքնավար Հանրապետության
- Շվեդիայի Ուփսալա
- Բելառուսի Հանրապետության Վիտեբսկի մարզի
- Ռումինիայի Հարգիտա նահանգների հետ :

Հայ - ֆրանսիական համագործակցության շրջանակներում Ֆրանսիայի ՊԱԿԱ ռեգիոնի հետ համագործակցությամբ մի շարք ծրագրեր են իրականացվում:

2017թ.-ին Լոռու մարզպետ Ա.Նալբանդյանի Մարսել կատարած այցի ընթացքում երկու մարզերի միջև մշակվել է համագործակցության պայմանագիր և Ֆրանկոֆոնիայի ս.թ. հոկտեմբերի գագաթնաժողովում այն կվավերացվի: 2015թ.-ին կնքվեց ՊԱԿԱ ռեգիոնի հետ 2015-2017թթ. համագործակցության համաձայնագիրը: Համաձայնագրով նախատեսվել էր ընդհանուր 451 000 եվրոյի աշխատանքների իրականացում. ընդ որում՝ վերջիններիս մի մասը ուղղված է մարզում տուրիզմի եւ ագրոտուրիզմի զարգացմանը: Համագործակցության արդյունքում հիմնադրված «Թումանյան աշխարհ» զբոսաշրջային գրասենյակի կողմից 2016թ.-ի ընթացքում իրականացվել են բազմաթույթ աշխատանքներ:

Համագործակցության շրջանակներում մարզպետարանի հետ համատեղ Թումանյանի տարածաշրջանի 7համայնքների զբոսաշրջության գրավչությունը բարձրացնելու համար մշակվել են 5 ներդրումային ծրագրեր, որից 2018թ.-ին կհիմնադրվի Ախթալայում Ժան-Ժակ դը Մորգանի անվան ցուցասրահ-թանգարանը:

Ռիոն Ալպ ռեգիոնի հետ համագործակցության շրջանակներում իրականացվել են էկոտուրիզմի զարգացման ծրագրեր, այդ թվում՝

✓ 2014թ.- ին քայլքային 16 երթուղիների մշակում

✓ 2015թ.-ին Դսեղի այցելուների կենտրոնի ստեղծում եւ երկու արահետի մշակում

✓ 2015թ.-ին Օծուն համայնքին կից 8 համայնքների համար ագրոտուրիզմի զարգացման նկատառումներով մեկնարկվեց Օծունի գանձեր փառատունը:

Յուրաքանչյուր տարի արդյունավետ համագործակցություն է իրականացվել շուրջ 50 միջազգային կառույցների հետ, այդ թվում՝

Համաշխարհային բանկ- (Համաշխարհային Բանկի և Ձեռնարկությունների Ինկուբատոր Հիմնադրամի կողմից 2014-2015թթ. անցկացվեցին Նորարարության Համաֆինանսավորվող դրամաշնորհների մրցույթներ, որին ակտիվորեն մասնակցել են Վանաձորյան 16 թիմեր, նրանցից 3-ը հաղթող են ճանաչվել մրցույթում՝ ներգրավելով մոտ 100,0հազ. ԱՄՆ դոլար համախառն ներդրում: Արդյունքում ստեղծվել են 3 նոր ընկերություն, 14 նոր աշխատատեղեր):

ՀԲ-ի կողմից ներկայումս իրականացվում է խոշորածավալ ներդրումներ ճանապարհաշինության բնագավառում:

Ասիական զարգացման բանկ - «Ասիական բանկ» վարկային ծրագիրը, որը 2012թ.-ից «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող Լոռու մարզի համայնքներում անցկացվել է խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման աշխատանքներ:

Գերմանական KFW բանկ - Ծրագրի մեկնարկը սկսվել է 2012թ.-ից, Հայ Գերմանական կամագործակցության շրջանակներում KFW Գերմանական վարկային ծրագրով «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող համայնքներում ծրագրի կողմից իրականացվել են ջրամատակարարման համակարգերի բարելավման աշխատանքներ:

Հայաստանի Մանուկներ հիմնադրամ (COAF) – 2015թ.-ից ՀՀ Լոռու մարզում Սմարթ ստեղծագործարանների հիմնում Լոռու մարզի Արևածագ, Աքորի, Դեբեդ, Դսեղ, Թումանյան, Ձորագյուղ, Մարց, Մեծ Այրում, Քարինջ:

Դիակոնիա- հայ-հոլանդական բարեգործական կազմակերպության աջակցությամբ 2013թ.-ից մարզում իրականացվել են բազմաթիվ բարեգործական միջոցառումներ՝ միտված հատկապես կարիքավոր, առողջական եւ այլ խնդիրներ ունեցող անապահով, բազմազավակ ընտանիքներին: Իրականացվել են բազմաթիվ տնտեսական զարգացմանն ուղղված ծրագրեր, այդ թվում՝ մեղվաբուծության, ծառատնկման, մշակաբույսերի բազմացման: Առողջապահական և սոցիալական համակարգերի բարեկարգման և բարելավման ծրագրեր, այդ թվում՝ 2016թ.-ին բացվեց Թումանյանի ծերերի կենտրոնը որտեղ առաջին անգամ կազմակերպվեցին շուրջ 20 երեխաների ամառային հանգիստը: 4 տարի անընդմեջ մարզի գրեթե բոլոր համայնքներում իրականացվել է տաք հագուստի, սննդի և գրենական պիտույքների տրամադրման ծրագրեր: Իրականացվեց բուժ հաստատությունների վերանորոգման բուժանձնակազմի վերապատրաստման, Վանաձորի թիվ 1 գիշերօթիկ դպրոցում ջերմոցային տնտեսության հիմնման ծրագրեր և այլն:

UNIDO -2013-2015թթ իրականացվել են երիտասարդ ձեռներեցների աջակցման ծրագրեր, տրամադրվել են վարկային միջոցներ:

Լոռու մարզում ԵՄ եւ այլ ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրեր

ՀԵԿԱ (Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի)- «Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում Հայաստանում» պիլոտային ծրագրի շրջանակներում, 2011-2016թթ իրականացրել է ձեռներեցության դասընթացների կազմակերպում, որի արդյունքում լավագույն բիզնես ծրագրեր ներկայացրած կին շահառուներ ստացել են դրամաշնորհներ:

CISP - կազմակերպությունը 2013-2016թթ. «Միգրացիայի սոցիալ-տնտեսական դրական ազդեցության ուժեղացումը Հայաստանում ավելի լավ ապագայի համար» ծրագրի շրջանակներում իրականացրել է ձեռներեցության դասընթացներ, որի արդյունքում լավագույն բիզնես ծրագրեր ներկայացրած շահառուներ ստացել են դրամաշնորհներ:

ՕԳԱՆ -2016թ.-ին մարզպետարանի կողմից մշակվել է էկոլոգիապես մաքուր մեղվաբուծության զարգացման ծրագիր:

Զբոսաշրջության զարգացման նկատառումներով իրականացվել է **Լոռու օրրան կենտրոնի** հիմնում Փամբակ համայնքում 2013թ-ին:

Վերականգնվող էներգիայի և էներգիայի արդյունավետ օգտագործման ծրագիրն իրականացնում է «**Հաբիթաթ ֆոր հյումանիթի**» **ՀԿ-ն Սպիտակ եւ Վայք** քաղաքներում: Ծրագրի շրջանակներում վերապատրաստվել են Սպիտակի համայնքապետարանի մասնագետներ, բնակչության շրջանում իրագեկում կազմակերպելու նպատակով անց են կացվել էներգիայի օրեր միջոցառում եւ հանդիպումներ, կազմվել է վերանորոգվող շենքերի վերանորոգման նախագծերը: ԵՄ ֆինանսական ներդրումը կազմում է **807,256** եվրո, իսկ Սպիտակի համայնքապետարանինը՝ **192,375 եվրո**: Ծրագիրը ենթադրում է 27 բազմաբնակարան շենքերում էներգիայի խնայողության մոդելների կիրառում՝ ջերմամեկուսացում, արեային մարտկոցների տեղադրում, տանիքների եւ մուտքերի դռների փոխարինում:

ՄԱԿ-ի զարգացման ծրագիր (ՄԱՁԾ), Հայաստանյան ներկայացուցչություն **իրականացրել է** «Համայնքային դիմակայության և բնապահպանական արտակարգ իրավիճակներին պատրաստվածության կարողությունների զարգացում» Ստեփանավանում: Ծրագիրն իրականացվել է «Կատալիտիկ ֆոնդ», «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ գործընկերների հետ համատեղ, բյուջե՝ 1 250 000 ՀՀԴ:

ԱՄՆդեսպանատան ֆին. աջակցությամբ Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի (ԿՏԲԿ) հայաստանյան մասնաճյուղը 2016թ. օգոստոս ամսին սկսեց Լոռու մարզի Վանաձոր քաղաքի «Շրջակա միջավայրի պահպանության տեղական գործողությունների ծրագրի» (ՇՄՊՏԳԾ) մշակման աշխատանքները: Ծրագրի նպատակների հիմքում ընկած է բնապահպանական խնդիրների որոշումների կայացման և միջոլորտային համագործակցության գործընթացներում հանրային մասնակցության ապահովման և տեղական մակարդակում բնապահպանական պլանավորման իրագործման սկզբունքը:

ԶԺՀ դեսպանատունը ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության հետ համատեղ իրականացրել է Վանաձոր քաղաքի Վարդանանց 11 հասցեում պարզ տիպի մարզահրապարակների կառուցում:

Գյուղի Զարգացման Արդի Նախաձեռնություն(ԱՐԴԻ) ծրագրի շրջանակներում՝ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ, մարզում իրականացվել է 6 դրամաշնորհային ծրագիր: Բիզնես ծրագրերի տիպերը եղել են՝ այգեգործություն, ջերմոցային տնտեսություն, գյուղական տուրիզմի զարգացում և գյուղ, տեխնիկայի տրամադրում:

«Վորլդ Վիժն Ինթերնեշնլ» ՄԲԿ Հայաստանյան մասնաճյուղի Ստեփանավանի և Ալավերդու գրասենյակների միջոցով շարունակել է իր բարեգործական աշխատանքները: Մարզի Սարչապետ և Կողես համայնքներում իրականացվել են

գյուղատնտեսական, կրթական և սոցիալական ոլորտներին առնչվող ծրագրեր, ընդհանուր ներդրումներ՝ **1.4 մլն դրամ**: «**Լուսինգ ֆորվարդ**» զբոսաշրջության հիմնադրամի կողմից իրականացվում է «Ալավերդի քաղաքային համայնքի Միկոյան եղբայրների թանգարան» ՀՈԱԿ-ի վերանորոգում, հասարակության սոցիալ-մշակութային կյանքում թանգարանի դերի բարձրացում (թանգարանը գտնվում է վերանորոգման մեջ, տարվում է նաև ցուցանմուշներով հիմնովին համալրելու աշխատանքներ): Ծրագրի ընդհանուր արժեքը՝ **35.0 մլն դրամ**:

Գերմանիայի միջազգային համագործակցություն (GIZ), Հայաստանյան ներկայացուցչության աջակցությամբ Վանաձորի համայնքապետարանում ստեղծվել է քաղաքացիների սպասարկման գրասենյակ, իսկ Ապավեն համայնքում իրականացրել է «Թերմոկուլտուրայի զարգացման» ծրագիր (հողագործության, անասնապահության, ձկնաբուծության, մեղվաբուծության զարգացում):

ՀՏԶՀ և ԱՄՆ ՄԶԳ (USAID) - Թումանյան համայնքի համար ձեռք է բերվել բազմաֆունկցիոնալ էքսկավատոր, աղբատար մեքենա, ինքնաթափ մեքենա, կառուցվել են ավտոկանգառներ, մեքենաների ծածկարանի և աղբամանների հարթակներ: Ներդրումների ընդհանուր ծավալը շուրջ 81.2 մլն դրամ:

ԱՄՆ պաշտպանության դեպարտամենտի սպառնալիքների նվազեցման գործակալությունը (DTRA) նախաձեռնել է ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ Լոռու մարզի Վանաձորի մարզային լաբորատորիայի կառուցում: Ծրագրի ասարտը 2018թ.-ին:

ՀՀ կառավարության, UNDP և GEF միջազգային կազմակերպությունների կողմից «Հողերի և անտառների կայուն կառավարման ներդրումը Հյուսիս-արևելյան Հայաստանի չոր լեռնային լանդշաֆտներում» համատեղ ծրագիր Լոռու և Տավուշի մարզերում

- Արդվի համայնքում կառուցվել է 260մ² պասիվ արևային ջերմատուն, որը հանձնվել է «Արդվի» կոոպերատիվին: Ծրագրի նախագծային արժեքը կազմել է 21 մլն. դրամ:

- Իրականացվել է Օձունի համայնքամերձ 93 հա անտառի կոճղաշիվային վերածի օժանդակման աշխատանքներ: Առաջացած շուրջ 300մ³ փայտանյութը անվճար տրամադրվել է Օձունի և հարևան համայնքների կարիքավոր ընտանիքներին:

- Ընթացքի մեջ են մարզի անտառտնտեսությունների անտառկառավարման պլանների (ԱԿՊ), ինչպես նաև «Մարգահովիտ» և «Կովկասյան Մրտավարդենի» արգելավայրերի կառավարման պլանների կազմման աշխատանքները:

Մարզի նախակրթարանների վերանորոգման եւ գույքի ապահովման համար ներդրումներ են իրականացրել **ԵՀԽ հայաստանյան Կլորսեղան հիմնադրամը, Փասադենայի «Քույր քաղաքների ասոցիացիա» ՀԿ-ն, «Փրկենք երեխաներին» (Save the children) միջազգային կազմակերպությունները**: Լայնածավալ աշխատանքներ են իրականացվել **ՄԱԿ-ի զարգացման ծրագիր (ՄԱԶԾ), Հայաստանյան ներկայացուցչության** կողմից, որի ներդրումների ծավալը շուրջ **68.7 մլն դրամ է**:

ՎՕՄԲ-ն կորպորացիան իրականացրել է Լեջանի և Լեռնանցք համայնքներում ջրամատակարարման և խմելու ջրի համակարգի վերանորոգման աշխատանքներ:

Իրենց բարեգործական ծրագրերն են շարունակել «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամը, Հայկական Կարմիր Խաչի ընկերությունը, Երուսաղեմի Սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամը, Պարենի Համաշխարհային Ծրագրի Հայաստանյան գրասենյակը, «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ն, «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամը,

«Լիարժեք կյանք» ՀԿ-ն «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավումը զբաղվածության խթանման միջոցով» (LIFE՝ Կյանք) ծրագրի աջակցությամբ համայնքի ենթակայության ներքո Վանաձորում կազմավորված բարեկարգման հարցերով և համայնքային գույքի պահպանման և սանմաքրման աշխատանքներով զբաղվող «Նեցուկ» ՀՈԱԿ-ում և Սպիտակում՝ ջերմոցային տնտեսությունում աշխատում

են 14-ական հաշմանդամություն ունեցող անձինք: Վանաձորում գործող «Էբրիկոս» ընկերությունում աշխատում են 15 հաշմանդամություն ունեցող անձ /որից՝ հուշանվերների արտադրությունում՝ 10, իսկ արծաթյա զարդերի արտադրությունում՝ 5/:

ԶՔՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Ոլորտի զարգացման նկատառումներով 2014թ.-ին մարզպետ Ա.Նալբանդյանի նախաձեռնությամբ հիմնադրվեց Զբոսաշրջության զարգացման Լոռու հիմնադրամը եւ նրա կազմում հիմնադրվեց Թումանյան աշխարհ միջհամայնքային զբոսաշրջային կենտրոնը:

Մարզի համայնքների կողմից (այդ թվում Վանաձոր համայնքի զարգացման ծրագրերը) մշակվել եւ ՀՀ կառավարություն են ներկայացվել 18 ներդրումային ծրագրեր՝ հնարավոր ֆինանսավորման միջոցներ գտնելու նպատակով:

2017թ.-ից ԵՄ ֆինանսական միջոցներով մեկնարկվել է «Ճամփեզրյա կայանի» կառուցում ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից:

2018թ.-ին Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնում Հայաստանի Ձեռնարկությունների հիմնադրամի եւ Լոռու մարզպետարանի համագործակցության շրջանակներում կազմակերպված Հայաստանում զբոսաշրջության զարգացման հնարավորությունների մրցույթ հեքըթոնի արդյունքում, Լոռու մարզի թիմերի կողմից առաջարկված 5 լավագույն ծրագրեր քննարկվել են մարզպետարանում, հետագայում հնարավոր ֆինանսավորման աղբյուրներ գտնելու նպատակով:

Առավել մանրամասն տեղեկատվության համար առաջարկում ենք այցելել Լոռու մարզպետարանի կայքէջը, որտեղ տեղադրված են ՀՀ Լոռու մարզպետի ամենամյա հաշվետվությունները: